ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 փետրվարի 2020 թվականի N 41

ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՏՈՒԿ ՏԵՂԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Հանրաքվեի մասին,, Հայաստանի Հանրապետության Սահմանադրական օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասով , 18-րդ հոդվածի 6-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով .

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2020 թվականի ապրիլի 5-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի քարոզչական պաստառները փակցնելու համար Եղեգնաձոր համայնքի տարածքում հատկացնել հետևյալ հատուկ տեղերը ՝

   - Միկոյան 16 բ/շ-ի հյուսիսային տարածք - 12 քմ
   - Միկոյան 14բ/շ-ի հարավային տարածք - 12քմ
   - Միկոյան փ.՝ Կենցաղի տանը կից հենապատի վրա - 5 քմ
   - Միկոյան 3/7 հասցեում գտնվող սրճարանի ցանկապատի վրա - 20քմ
   - Քաղաքային շուկայի հենապատի վրա - 4քմ
   - Կինոթատրոնի ճակատային հատված - 18քմ
   - Նարեկացի-բժիշկ Գևորգյան փողոցների խաչմերուկում ՝«Եղեգնաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի պատի վրա - 25քմ
   - Սևակի 2 բ/շ-ի ճակատային մաս -15 քմ
   - Մոմիկի 4 բ/շ- ի ճակատային մաս - 15 քմ
   - Շահումյան փողոցում՝ Պոլիկլինիկայի շենքի պատի վրա -15քմ
   - Ավագյան փողոցի հենապատի վրա -70քմ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ակտի ընդունման հաջորդող օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

2020թ. փետրվարի 11
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 փետրվարի 2020 թվականի N 42

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հանրաքվեի մասին>>Հայաստանի Հանրապետության Սահմանադրական օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով ,<<Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք>> Հայաստանի Հանրապետության Սահմանադրական օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2020 թվականի ապրիլի 5-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի անցկացման տեղամասային կենտրոն սահմանել՝

- Մշակույթի տուն - Մոմիկի 1
- <<Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն>> ՀՈԱԿ -Շահումյան 14
- Թիվ 1 հիմնական դպրոց - Վ. Գևորգյան 4
- Թիվ 2 հիմնական դպրոց - Նարեկացի 2 :

2. Սույն որոշման մասին տեղեկացնել լիազոր մարմնին, թիվ 36 տարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնը տիրապետող կազմակերպության ղեկավարին :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2020թ. փետրվարի 11
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 փետրվարի 2020 թվականի N 43

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՏՆԱՄԵՐՁԻ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին 22-րդ և 24-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումը և հաշվի առնելով ավագանու 27.12.2019թ-ի թիվ 98-Ն որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սերգեյ Ժորայի Մնացականյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2446595 վկայական) բնակելի տան և տնամերձի՝ ք. Եղեգնաձոր, Հարավ - արևելյան 4 հասցեն փոփոխել և տրամադրել հետևյալ հասցեն՝ Վայոց ձորի մարզ, համայնք Եղեգնաձոր ք., Խնձորի այգի թաղամաս տուն 82 :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անձին առձեռն հանձնելու պահից:

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2020թ. փետրվարի 13
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 փետրվարի 2020 թվականի N 44

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՏՆԱՄԵՐՁԻ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին 22-րդ և 24-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ.թիվ 2387-Ն որոշումը և հաշվի առնելով ավագանու 27.12.2019թ-ի թիվ 98-Ն որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ջիվան Արամայիսի Հակոբյանին, Լարիսա Սիրեկանի Մնացականյանին, Սուրեն և Ալիկ Ջիվանի Հակոբյաններին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 1693013 վկայական) բնակելի տան և տնամերձի՝ ք. Եղեգնաձոր, Օրբելի-10 հասցեն փոփոխել և տրամադրել հետևյալ հասցեն՝ Վայոց ձորի մարզ, համայնք Եղեգնաձոր ք., Օրբելի փողոց տուն 1:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անձին առձեռն հանձնելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2020թ. փետրվարի 12
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 փետրվարի 2020 թվականի N 45

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՏՆԱՄԵՐՁԻ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին 22-րդ և 24-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումը և հաշվի առնելով ավագանու 27.12.2019թ-ի թիվ 98-Ն որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մայիս Վարազդատի Թադևոսյանին և համասեփականատերեր Զորիկ Կորյունի Խաչատրյանին և Վարազդատ Մայիսի Թադևոսյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2151743 վկայական) բնակելի տան և տնամերձի՝ ք. Եղեգնաձոր, Օրբելի նրբ. թիվ 7 հասցեն փոփոխել և տրամադրել հետևյալ հասցեն՝ Վայոց ձորի մարզ, համայնք Եղեգնաձոր ք., Օրբելի փողոց 1-ին նրբանցք տուն 7 :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անձին առձեռն հանձնելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

2020թ. փետրվարի 12
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 փետրվարի 2020 թվականի N 46

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 12.02.2020Թ-Ի ԹԻՎ 43 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Համայնքի ղեկավարի 12.02.2020թ-ի «Բնակելի տան և տնամերձի հասցեի փոփոխման մասին» թիվ 43 որոշման առաջին կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սերգեյ Տոդայի Մնացականյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2446595 վկայական) բնակելի տան և տնամերձի՝ ք. Եղեգնաձոր, Հարավ -արևելյան 4 հասցեն փոփոխել տրամադրել հետևյալ հասցեն՝ Վայոց ձորի մարզ, համայնք Եղեգնաձոր ք., Խնձորի այգի թաղամաս տուն 92:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անձին առձեռն հանձնելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2020թ. փետրվարի 14
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 փետրվարի 2020 թվականի N 47

ՎԱՀՐԱՄ ԱՆԱՍՏԱՍԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 275-283-րդ, 219.1-րդ և 305-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 53-րդ, 58-60-րդ հոդվածների, հիմք ընդունելով Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ - գլխավոր ճարտարապետի կողմից 2020 թվականի հունվարի 14-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ N 1 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու համար Վահրամ Անաստասի Խաչատրյանի նկատմամբ նշանակել վարչական տուգանք՝ 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Վահրամ Խաչատրյանը պարտավոր է սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 15-օրյա ժամկետում նշանակված տուգանքի գումարը մուծել Եղեգնաձորի համայնքապետարանի 900355101065 հաշվեհամարին և վճարման անդորրագիրը ներկայացնել Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ - գլխավոր ճարտարապետին:

3.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Եղեգնաձորի համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վահրամ Խաչատրյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 փետրվարի 2020 թվականի N 48

ՆԱՐՄՍԹՈՈՒՆ ՍՊԸ-Ի ՀԵՏ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԾԱՎԱԼԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 21-ի թիվ 10-Ա որոշումը և 2012 թվականի հունիսի 12-ին կնքված Նարմսթոուն ՍՊԸ-ի հետ գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով հողամասերը վարձակալության հանձնելու մասին պայմանագրի 6-րդ գլխի 8.5-րդ կետը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2012 թվականի հունիսի 12-ին կնքված Նարմսթոուն ՍՊԸ-ի հետ գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով հողամասերը վարձակալության հանձնելու մասին պայմանագիրը (գրանցված է ՀՀ Վայոց ձորի մարզ նոտարական տարածք, Եղեգնաձորի նստավայր) լուծել:

2. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Եղեգնաձորի համայնքապետարանի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ***ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***

2020թ. փետրվարի 14
ք.Եղեգնաձոր